ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
257-3-ի

ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Արմեն Երիցյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Երիցյան,
Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի տասնմեկերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2015 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ Ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու ապահովմանն ուղղված արդյոք իրականացվե՞լ են տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցների հայթայթում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար: Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել գործընթացի հիմքերը՝ գնումների առաջարկներ, տեխնիկական հիմնավորումներ, ներկայացված առաջարկներ, միջոցների գումարի չափը և դրանց աղբյուրները և այլն:
2. Տեխնիկասարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթացի ապահովման փաստաթղթերը՝ պայմանագրեր, գնված սարքավորումների ցանկը և դրանց բաշխումը, ստեղծված կայքերի ցանկը և այլն, ինչպես նաև՝ մինչ օգոստոսի 1-ը ծախսված գումարի չափը:
3. Խնդրում ենք նշել հանձնառության ամբողջական իրականացման համար նախատեսված գումարի չափը և դրա աղբյուրը՝ պետական բյուջե, համայնքային բյուջեներ, դրամաշնորհային գումարներ կամ այլ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ